# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան
1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

N 269
*06 դեկտեմբեր 2019թ.*

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 61-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 61-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը՝

***որոշում եմ***

1.Հացավան համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:
2. Հաստատել Հացավան համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝համաձայն հավելվածի:
3.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին՝համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Հացավան համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019թ. դեկտեմբերի 03
գ.Հացավան